

ՓՕԼ ԳԱԼԻՆԵԱՆԻ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՖԻԼՄԸ ՈՒԻԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Գրեց՝ ՅՈՎԻԿ ԷԹԵԱՆ

Անուանի արուեստագետ՝ Փոլ Գալինեանի գեղարուեստական գործը՝ «Ուիլիլմ Սարոյեան-Մարդը, Գրողը» շարժանկարը վերջերս արժանացաւ առաջին կարգի մրցանակի, Հիւսթընի մէջ կայացած միջազգային փառատօնին յիսուսէ աւելի միջազգային կենսագրական-փաստագրական ժապաւէններու մէջ:

Ասիկա բացառիկ նշանակութիւն ունի արուեստագէտին համար: Այս յաղթանակը պսակումն է իր բազմաթիւ տարիներու ժրջան ու տքնաջան աշխատանքին: Առանց որեւէ մէկ հայկական կազմակերպութեան մը օժանդակութեան, առանձինն, Փոլ Գալինեան տասնեակ տարիներու աշխատանքով յաջողած է իրականացնել իր երազը որ է ներկայացնել Ուիլիլմ Սարոյեանը, ոչ թէ միայն իր ազգակիցներուն, այլ նաեւ միջազգային գրասէր հասարակութեան:

Գալինեան անկասկած անվերապահ սէր ու հիացում ունի Սարոյեանի անձին ու գործին նկատմամբ: Այն օրէն ասդին երբ ոտք դրած է այս երկիրը, իր միակ փափաքն է եղած անձնապէս ծանօթանալ հայ մեծ գրագէտին, որու ստեղծագործութիւններուն հիացողը եղած է իր պատանեկան տարիներուն:

Փոլ Գալինեան ծնած է Պէյրութ, 1932ին: Պատանեկան տարիները անցուցած է Դամասկոսի մէջ ու ապա կրկին անցած է Պէյրութ ու հիմնած է իր առաջին լուսանկարչատունը: 1964ին բարեբախտութիւնն ունեցած է գալու Նիւ-Եորք ու անմիջապէս սկսած է հետեւիլ լուսանկարչական եւ շարժանկարային արուեստի վերջին նորութիւններուն, յաճախելով Նիւ-Եորքի նկարչական ու Շարժանկարային Արուեստներու Հիմնարկի դասընթացները:

1967 թուականին զինք կը տեսնենք դարձեալ Պէյրութի մէջ: Ներ ամուսնանալէ ետք կրկին կը դառնայ Միացեալ-Նահանգներ ու վերջապէս կը հաստատուի Ֆրէզնո ու կը հիմնէ իր լուսանկարչական նոր արուեստանոցը: Հոս է որ կ'իրականացնէ իր տարիներու երազը՝ ճանչնալ Սարոյեանը ու վայելել իր մտերմութիւնը ու մանաւանդ լուսանկարել զինքը այլազան դիրքերով:

Մինչեւ Սարոյեանի մահը 1981 թուականին, Գալինեան յաճախ գտնուելով մեծ գրողի անմիջական շրջանակին մէջ, սքանչելի պատեհութիւններ կ'ունենայ գրագէտը նկարելու այլեւայլ առիթներով: Գրագէտին մահուանէ ետք Գալինեան ողջմտութիւն կ'ունենայ այլազան նկարներով պատրաստելու սահիկներու շարք մը ու իր բացատրողական ելոյթներով կը ցուցադրէ վաթսուսէ աւելի տարբեր վայրերու մէջ ու նաեւ հեռատեսիլի վրայ: Նկարներու ցուցադրութեան առընթեր, Գալինեան կը պատմէ նաեւ, թէ ի'նչ պարագաներու եւ պայմաններու տակ կրցած է մօտենալ մեծ գրագէտին ու ի'նչ եղած են իր առաջին տպաւորութիւնները անոր մասին: Երբ այդ կարճ շարժանկարը կը ցուցադրէ Շիքակոյի համալսարանին մէջ,

Թոմաս Գուլումբեան անունով ազնուական անձնաւորութիւն մը կը մօտենայ իրեն ու կը թելադրէ որ լուրջ ֆիլմ մը պատրաստէ Սարոյեանի կեանքին ու գործին մասին, օգտագործելով իր այլազան նկարներն ու իր մասին քաղած տեղեկութիւնները: Այդ առթիւ իրեն քաջալերութիւն իրեն կը նուիրէ որոշ գումար մը ու կը խոստանայ իրեն զօրավիգ ըլլալ ժապաւէնի պատրաստութեան ու ցուցադրութեան մէջ:

Այս օժանդակութիւնը զօրաւոր խթան մը կը հանդիսանայ Գալինեանի ապագայ գործունէութեան մէջ: Կը լծուի լուրջ աշխատանքի ու երկար ուսումնասիրութիւններէ ետք վերջապէս կը յաջողի իրականացնել իր փափաքը, պատրաստելով գեղարուեստական ժապաւէն մը, որ հանդիսականին կը ներկայացնէ իսկական Սարոյեանը-Մարդը, Գրողը:

Գալինեան իսկական արուեստագէտ մըն է: Վերջին ծայր բժախնդիր է ու դժուարահաճ: Շարժանկարը կը սկսի քսանական թուականի Սարոյեանի ընտանիքի կեանքի հետ կապուած այլեւայլ դրուագներով: Ասոնք հարազատ պատկերներ են, որոնք կը յիշեցնեն հին Ֆրէզնոն իր կենցաղով ու բարիքով:

Շարժանկարի պատմութեան համար Գալինեան մանրամասնօրէն ուսումնասիրած է գրողի կեանքն ու գործերը: Օգտագործած է հին լուսանկարներ, վերատադրած է տեսարաններ ու բնակավայրեր եւ օգտագործած է շարժանկարային այլեւայլ հատուածներ:

Յատկանշական է Սարոյեանի թէ՛ հայերէն եւ թէ՛ անգլերէն լեզուով ունեցած արտայայտութիւնները, որոնց մէջ ան կը խօսի անկեղծ ոգիով իր ծննդավայր՝ Ֆրէզնոյի, իր ընտանիքի ու ի վերջոյ իր գրականութեան ու իր հայկական ինքնութեան մասին: Ֆիլմի խօսնակն է ծանօթ հայազգի դերասան Մայքըլ Օհանեան-Քանըրզը որ պատշաճօրէն կը ներկայացնէ Սարոյեան գրագէտը, մարդը եւ մարդասէրը, յենլով իր կենսագրական ծանօթութիւններուն, իր զրոյցներուն, հրապարակային ելոյթներուն, թերթերու եւ պարբերականներու մէջ երեւցած անհամար յօդուածներուն ու ինչպէս նաեւ իր անձնական ծանօթութիւններուն վրայ:

Շնորհիւ Գալինեանի գեղարուեստական նկարներուն, մենք, հայերս ականատես եղանք երեւոյթի մը որ աննախընթաց է ազգերու պատմութեան մէջ: Իր լուսանկարներէն մին արժանացաւ Միացեալ-Նահանգներու եւ Նորհրդային Միութեան հաւանութեան, որով եւ երկու երկիրները համաձայնեցան միասնաբար հրապարակել Սարոյեանի նամակադրոշմը, միաժամանակ՝ Երեւանի ու Ֆրէզնոյի մէջ: Ասիկա բացառիկ պատիւ մըն էր հայութեան համար: Ըլլայ Սփիւռքի հայութիւնը եւ թէ մեր երկրի ժողովուրդը մեծապէս հպարտ ու բաւարարուած զգացին այս բացառիկ երեւոյթին առիթով:



Ուիլիլմ Սարոյեան